

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Զարմանալի ուժով մարդ :

ԻՆՈՒԹԵԱՆ հասարակաց տուած ձիրքերը իւրաքանչիւր իր ընկերին վրայ գրեթէ առ հասարակ հաւասար տեսնելով, կը զարմանայ եթէ յանկարծ առանձին մէկու մը վրայ սովորականէն դուրս առաւելութիւն մը լսելու կամ տեսնելու ըլլայ . ինչպէս հասարակ միտք ունեցող մը հանձարաւորին վրայ կը զարմանայ, տկարը զօրաւորին, գաճաճը հսկային, այսպէս կարգաւ : Իս սովորական բնութեան ձրից տարբերութիւններէն մտքերնիս աւելի առաջ տանելով, բնական կարգը թողլով, իր հրաշալեաց սահմանը կը մտնենք . և առաջիններէն համոզուած, կրնանք դիւրաւ հաւատք ընծայել անոնց ալ՝ թէպէտ և կարգէ դուրս ալ երևան : Իհաւաստի այն անսովոր հրէշներէն մէկն էր թովմաս թոփէմ յաղթանդամ անգղիացին՝ որ իր կարգէ դուրս ջղական զօրութիւն ու մարմնոյն ուժովը տասուերկու հոգւոյ դէմ կը դնէր . (թէպէտ և մարմնոյն ուժին համեմատ չէր մտքին ուժն ալ) : Իս մարդուս հասակին մեծութիւնն էր վեց ոտնաչափ . ծնած էր 1 րոտար 1710ին ատենները . իր հօրը արհեստն էր հիւսնութիւն . ու ինքն ալ ատեն մը աս արհեստին մէջ կըրթուելէն ետքը, ձանձրացաւ դնաց մաքսատան մը ծառայութեան մէջ մտաւ : Ետքը զան ալ թողլով սկսաւ ըմբշամարտական խաղերու մէջ մտնել, որով շատ աւելի կը թուեցաւ իրեն բնական ուժը՝ զոր այս խաղերուս մէջ երեցընելով շատ անգամ ամէնքը կը զարմացընէր, որուն վրայ մեծ գովեստներ կը խօսէին . ինչպիս Ռիլլիէմ Նըդզըն հանձարաւոր մատենագիրը մանրամասնաբար ասոր վարքը գրելու ատեն այս գովեստն ալ կու տայ, ըսելով . « Թովմաս իր զօրութեամբը կը յիշեցնէ մեզի Նոմերոսի դիւցազունները » : Եւ ալ ուրիշ խել մը ստուգապատում գրիչներ

միտքան կը վկայեն ասոր ճշմարտութեան վրայ, պատմելով իրեն ուժովը ըրած քաջութիւնները . որոնց մէկ քանին մենք ալ հոս կը յիշենք ընթերցողաց հետաքրքրական գէպք մը համարելով : Երբ զարմանալի է թոփէմին 1741ին Պաթի հրապարակին մէջ ցրցուցած ուժին հանգէօր, զորն որ կ'ըսեն թէ ուրիշ տեղեր ալ ըրեր է . իրեք հատ ջրով լեցուն տակաւներ իրարու կապած, և տակաւները շղթայի մը անցընելով վզէն կախած վեր կը վերցնէ, որոնց ծանրութիւնը չափեր են 1,836 լիտր, որ 500 ոխայի մօտ ըսել է . այս կարգէ դուրս քաջութեան համար հանդիսականաց ըրած ծափահարութիւնը թովմաս իրեն առած մեծամեծ վարձքերէն վեր կը դնէր . զոր երկրորդ Սամփսոն կը մականուանէին : Երբ ճեպարձեալ Պ. Տէտակիլիէ ականատես վկայութեամբ կը հաւաստէ թէ այս զօրաւոր մարդը, միայն մատուրներովը բաւականէ վեր մեծութեամբ ու հաստութեամբ անագէ արիստայ մը գալարեր է : — Երբնպէս սրունքները իրարու քով ձիգ կապելէն ետքը, սրունքներուն վրայ հաստ պնակ մը կապեր են, զորն որ ազգրին ջղերուն ձգտելովը ջարդուբուրդ ըրեր է : — Ինչանկ հաստ պնակ մ'ալ երկու մատին մէջ կողմնակի սխմելով կոտրեր է : — Երբ ոտք երկայնութեամբ սեղանատախտակ մը ահուաներովը խածնելով ծայրէն՝ հորիզոնական զրքով վեր կը բռնէ, ու խել մը ատեն անչարժ կը կենայ : — Երկաթեայ կանգնաչափ գաւազան մը իրեք բթաչափ հաստութեամբ ձախ թուին վրան զարնելով՝ գրեթէ ուղղանկիւն կը ծռէ զգաւազանը : Ետքը նոյն գաւազանը երկու ծայրերէն բռնելով, կորացեալ մասը վզին կը թընցնելով՝ գաւազանը նորէն կը շտկէ : — 800 լիտր ծանրութեամբ քարէ գլան մը օղակէն բռնած վեր կը վերցընէ : — Տան մը սիւները շալկած տարեր է, ինչպէս զինուոր մը կը կրէ իրեն հրացանը : — Ձին կը բռնէ ցանգի մը դրան վրայ կը հանէ : — Թղթի թերթերու պէս կը գալարէ եղեր անագեայ ու եր-

կաթեայ բաւական հաստութիւն թեր-  
թեր :

( )ը մը կը տեսնայ որ իր տանը պա-  
հապանը ելեր իր սնտուկին վրայ պաու-  
կեր է , կամացուկ մը կը մօտենայ քովը ,  
ու մարդը սնտուկով հանդերձ կը վեր-  
ցնէ ու իր դրացւոյն պատէն անդին կը  
նետէ :

Պետ ուրիշ շատ կտրճութիւններ ալ  
ըրած է խոլմաս , բայց մենք այսչափս  
բաւական կը սեպենք , սս մարդուն ու-  
ժին մեծութիւն հասկըցնելու համար .  
Բայց ահա այսպիսի գորաւոր մարդ մը  
որ մեծամեծ քաջութիւններով աշ-  
խարհք զարմացուցեր է , տկար կնկան  
մը գերի ըլլալով , ու անոր խաբէուէն  
յաղթուելով զոհ կ'ըլլայ իր ծաղիկ հա-  
սակին մէջ , ինչպէս երբեմն Սամիսոն  
Պալիւեայէն , յիշատակ թողլով իրեն  
քաջագործութիւնները , զորոնք ամէն  
լսողներուն միտքը զարմանքէն աւելի  
ցաւով կը պաշարեն , որ այդպիսի կտրիճ'  
մարդ , այդպիսի անարգ կրբի մը գերի  
եղած կորսուեցաւ :

**ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ**

**ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**

Որո՞ք :

ԲՅՍ կենդանիս աւելի անապատները  
կը գտնուի , մարդկանց պիտոյքը լեցը-  
նելու և այն անապատին անտանելի նե-  
ղութիւնը դիւրացընելու համար , որուն  
համար հոն տեղի բնակիչքը արդարեւ  
պէտք է որ երախտագէտ ըլլան Բրտու-  
ժոյ և անոր ամենազօր աջը օրհնեն :  
Ինչպէտ բնութեան բերքերը ան կող-  
մերը առատ չեն , բայց խիստ կարեւոր-  
ներն ալ պակաս չեն : Ուստի հովանւոյ  
համար կը գտնուին ծառեր , և անթու-  
թեան համար արմաւենւոյ պտուղ-  
կենդանիք միայն կը պակսին . որոնց-

մէ թէպէտ մէկ տեսակ միայն կայ ,  
բայց ան մէկը ուրիշ շատ կենդանեաց  
տեղը կը բռնէ , և այնչափ ծառայու-  
թիւն կ'ընէ , որոնց համար մեր կողմի  
բնակիչքը զանազան կենդանիք կը գոր-  
ծածեն . և ասիկայ է ահաւասիկ ուղ-  
տը . — Պիւֆֆոն երևելի բնապատու-  
մը կ'ըսէ . “ Ինչ որ ուղտին ամէն յատ-  
կութիւնները և օգտակարութիւնները  
մէկտեղ բերելու ըլլանք՝ պէտք է զանի-  
կայ օգտակարագոյն և դժուարագիւտ  
սեպենք քան զայլ ամենայն մարդու ծա-  
ռայող կենդանիները : Ուղտը , քան  
զփիղն ալ աւելի յարգ ունի , վասն զի  
թէ աշխատութիւնը և թէ ծախքը  
քսանիցս աւելի պակաս է . և ձին , էջը  
և եզն ալ մէկտեղ առնելով մէկ ուղտի  
յարգ չունին : Երկու ջորիի չափ բեռ կը  
տանի . խոտ ուտելով կ'ապրի , և կերածն  
ալ հազիւ թէ իշու կերածին չափ է . է-  
զը քան զկովը աւելի առատ և երկար  
ատեն կաթ կու տայ . և մատաղ ուղ-  
տին միսը աւելի համով և առողջա-  
րար է քան զհորթունը . մազերնին ա-  
ւելի գեղեցիկ է , և քան զամէն ազնիւ  
բուրդ յարգի է . և ամենեւին վրան ա-  
ւելորդ բան չկայ , մինչև աղտեղութիւն  
ալ չահ կը բերէ . վասն զի ջրվաթէն  
ամմնիադ աղ կը շինուի . աղըն ալ ,  
յարգ չգտուած տեղը , չորցընելով ու  
մանրելով անկողնի տեղ կը ծառայէ  
թէ իրենց և թէ ձիերուն , որոնց  
հետ յաճախ քաղքէ քաղաք ճամ-  
բորդութիւն կ'ընեն : Վարձեալ խիստ  
գիւրավառ ըլլալուն՝ երբ դէզ կ'ընեն և  
կը բռնկցընեն , այնպէս պայծառ և  
կենդանի լոյս կը հանէ , որ չորցած ան-  
տառի նմանութիւն կը բերէ , որով մեծ  
օգնութիւն է այն անապատներուն  
մէջ ուր որ ամենեւին ծառ չգտուիր , և  
վառելի նիւթոց պակասութենէն կը-  
րակն ալ ջրոյ պէս դժուարագիւտ է , :  
Բիւրեղայարաբացուոց համար երազընթաց  
և անխոնջ գրաստ մքն է , որ մէկ օրուան  
մէջ 40 փարսախ ճամբայ կը քալէ , և  
400 ոխա ծանրութիւն բեռ կը տանի :  
Ուղտ սնուցանողը՝ միայն ուղտէն կը  
հանէ միս , կաթ , բուրդ , և վառելու